

ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 260

ՀԱՄԱՅԻԼ

Թերթերը՝ 1 հատ։—**Մեծությունը՝** 3×362 սմ.։—**Նյութը՝** դեղնած, խունացած և կեղտոտած թուղթ։—**Կազմ՝** չունի։—**Պահպանակներ՝** չունի։—**Վիճակը՝** վատ, սկզբից և վերջից թերի, տեղ-տեղ պատռած։—**Գրությունը՝** միապուն։—**Գծումները՝** առանց ճնշումի։—**Գիրը՝** բոլորգիր։—**Զարդագրություն՝** սույն համայիլն ունի երեք նկարներ, որոնց ներքև գրվել է հետևյալը.—«Գաբրիէլ փողն գոչէ», «Գոլ և վարձ կշռեալն է», «Աւետարան ըստ Յոհաննու», երեք նկարներ, որոնք ներկայացնում են Գաբրիել, կշռող հրեշտակը և ս. Հովհաննես։ Սույն երեք նկարները նկարված են հասարակ ոճով, շատ հավանաբար հենց ինքը գրչի կողմից։—**Գրիչը՝** Թումա քահանա։—**Պատվիրատուն՝** Մանուկ և Նիկողոս եղբայրներ։—**Ծաղկողը՝** շատ հավանաբար նույն ինքն Թումա քահանա։—**Ժամանակը՝** 1716 թ.։—**Վայրը՝** Ռշտունյաց երկրի Բետականց գյուղ։—**Ծանոթություն՝** ստացված է նվեր տ. Վահան վարդապետ Տերյանից 1963 թ. դեկտեմբեր ամսին։ Սույն համայիլը ձեռք է բերված Հրազդանի շրջանից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պարունակում է մի քանի աղոթքներ, նաև Հովհաննու և Մատթեոսի Ավետարաններից մասեր, և թալիսման։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

...ի ծառայէս Աստուծոյ Մանուկին, Նէկէղոսին և այլոցն ամենեցուն. ամէն եղիցի եղիցի։

(Մանուկ անունը հիշվում է 13 անգամ.
Նէկէղոս » » » 12 »
Խաչօ » » » 3 »
Յոհանէս » » » 3 »
Սալամ » » » 2 » :)

Կան նաև այլ անուններ, որոնք հիշվում են մեկական անգամ, ինչպես Հերպետ, Աւէտ, Խոցդեղ, Մէլքոն, Խանաղ, Խլօ, Տէր Յովասաբ և այլն)։

ԳԼԽԱՎՈՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Փառք սէ անձնեա տէրութեան, իշխանութեան և զօրութեան, Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ։ Որ ետ կարողութիւն փծնայ արհետ և անիմայ անպիտան գծագրողի տոմիս որ չեմ արժանի զանունս յիշելոյ, որք հանդիպիք ամայ կարդալով և կամ օրինակելով, ասացէք Աստուած ողորմի վարպետին Տէր Թումայ սրբաւէր քահանային և ծընօղացն իմոց Շէրբէկին և Խաթուն Բէկուն, և կողակցին իմոյ և որդոյն իմոյ Վարդանին և եղբարցն իմոց Մարկոսին, Պետրոսին, Պօղոսին և Ըստեփանոսին, Սահօին և հօրեղբարցն իմոց Ամիրխանին և մանդասի Արպլշումին և Գրիգորին և կողակցին իւրոյ Շայումին, որ բազում երախտիք ունին ի վերայ մեզ. միթէ Քրիստոս Աստուած զիւր երկնից արքայութիւն տացէ նոց և մանաւանդ այնոցիկ որ Աստուած ողորմի, Աստուած ձեզ ողորմեսցի ամէն, քանզի եմք յերկրէն Թրակացոց և այժմ բնակիմք յերկիրն Ըռոշտունեաց ի գիւղն Բէտականց, թրակացի որ է մոկացի։

Արդ գրեցաւ սուրբ ճառս յիշատակ և ի պահպանութիւն Մանուկին եղբօրն Նէկէղոսին. ծընօղացն Խոցդեղին, Սալամին, Մէլքոնին, Յովանէսին, դարձեալ Նէկէղոսին, կողակցուն Խանաղին, Մանուկին, կողակցուն, մեծի և փոքու, Մանուկին, Խլօին, Խաչօին, Տէր Յովասաբին, որ կամակից եղև այս բարի բանին թվին ՌՃԿԵ (1716 թ.) ամէն։

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից և ԺԲ-ից։

№ 261

ՀԱՄԱՅԻԼ

Թերթերը՝ 2 կտոր (33+392 սմ.):—**Մեծությունը՝** 0.5×425 սմ.:—**Նյութը՝** դեղնած և խունացած մագաղաթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միապյուն:—**Գծումները՝** առանց ճնշումի:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրությունը՝** համայիլն ունի հասարակ ոճով գունավոր նըկարված հետևյալ նկարները՝ Մարիամ Աստվածածին, որ իր ձեռքին ունի Հիսուս Մանուկ, Հիսուսի խաչելությունը, ս. Ստեփաննոս, ս. Հովհաննես Կարապետ, հրեշտակապետը, վիշապը սպանող ս. Գեվորգ զորավար և ս. Սարգիս զորավար: Ունի նաև մի քանի հասարակ զարդագրեր:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Փիրումի որդի խոճա Փիլիպոս:—**Ծաղկողը՝** շատ հավանաբար նույն ինքը գրիչն է ծաղկել:—**Ժամանակը՝** 1663 թ.:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** ստացված է նվեր տ. Վահան վարդապետ Տերյանից 1963 թ. դեկտեմբեր ամսին: Սույն համայիլը ևս ձեռք է բերված Հրազդանի շրջանից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կիպրիանոս: Պարունակում է զանազան աղոթքներ տարբեր սրբերի ուղղված:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

...ի դիմաց ծառայիս Աստուծոյ Փիլիպոսին (անունը հետագայում ջնջվել է):

(10 անգամ հիշված է պատվիրատու Փիլիպոսի անունը, որ հետագայում ջնջված է):

...ի դիմաց ծառայիս Աստուծոյ Փիլիպոսին աւգնական եղիցի և պահապան յամենայն չարէ պահեսցէ Տէր Աստուած Ամէն:

...սուրբ և արժանաւոր աղօթիւքն ողորմեայ Քրիստոս Աստուած Փիլիպոսին, Ամէն:

...ի դիմաց ծառայիս Աստուծոյ Փիլիպոսին օգնական եղիցի, Ամէն:

Գրեցաւ Կպրիանոսս ի թվին Հայոց ՌՃԺԲ (1663) օգուստոսի Զ օրն ուրբաթ, ի վայելումն Փիլիպոսին: Աստուած բարով վայել տացէ: Ամէն:

Արդ որ հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսցիք աղօթս ձեր զստացող սորա աստուածասէր և բարեմիտ Փիրումի որդի խաւճայ Փիլիպոսն, և որ յիշէ յիշեալ լիցի ի Տեառնէ ամէն: Հայր մեր որ յերկինս սուրբ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծառայիս Աստուծոյ Սիրիթուխտին, Հախնայզարիս, Ցայիսուլթանիս, Թանկրիվերմիշիս, ծառայիս յԱստուծոյ Ցիսուսի Քրիստոսի:

(Սիրիթուխտ անունը հիշվում է 29 անգամ.
Թանկրիվերմիշ » » » 7 »
Հախնայզար » » » 9 »
Ցայիսուլթան » » » 7 »
Մալիկ » » » 2 » :)

Եւ սբ. Կարապետի միաբան Տէր Բարսեղս այս Կիպրիանոսս առի իմ հոգևոր որդի Սիրիթուխտին համար: Թվին ՌՃԶԶ-ին (1737) նոյեմբերի 4-ին առի Սիրիթուխտին ամէն:

№ 262

ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 2:—**Մեծությունը՝** 24.3×18.8 սմ.:—**Նյութը՝** դեղնած բարակ հասարակ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապյուն:—**Դատարկ թղթերը՝** մեկ հատ (երկրորդ թերթը):—**Տողերը՝** 19: **Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրությունը՝** կոնդակի վերևի մասի կենտրոնում կա մի մեծ կնիք, որի չորս կողմը նկարված է արեգակի ճառագայթները: Սրա վերևում նկարված է մի փոքր արեգակ իր ճառագայթներով, որի մեջտեղում մի եռանկյունի մեջ նկարված է մի աչք: Այդ ձախակողմյան մասում նկարված են երկու փոքրիկ թռչուններ, չորս խաչիկներ և երեք ծաղիկներ: Իսկ աջակողմյան մասում նկարված է մի գմբեթ և մի կտրած գլուխ: Օգտագործված են միայն կապույտ, կարմիր, կանաչ և դեղին գույները:—**Գրիչը՝** Զաքարիա Կոփեցի Պատրիարք ս. Երուսաղեմի (1840—1846 թթ.):—**Պատվիրատուն՝** նույն ինքն Զաքարիա Պատրիարք:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 12 մայիսի 1842 թ.:—**Վայրը՝** Ս. Երուսաղեմի հայոց վանք: **Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետի 1963 թ. նոյեմբեր ամսին Եգիպտոս կատարած հովվապետական այցելության առթիվ նվեր է ստացված Կահիրեաբնակ պրն. Արտաշես Գարտաշյանի կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Հետաքրքրության համար տրվում է կարճ կոնդակի ամբողջական բովանդակությունը):

Քրիստոսի ծառայ և շնորհիւ Սուրբ Հոգւոյն Պատրիարգ Առաքելական Աթոռոյն Երուսաղէմի Տէր Զաքարիա Արքեպիսկոպոս և հոգաբարձու բարեկարգութեան տնօրինական: (Գրված է կարմիր թանաքով):

Երկրպագելի տեղեաց չարչարանաց Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Ազնուազարմ իշխանազնեայ բարեհամբաւ մահտեսի Ալեքսան քրիստոսազօր մեծարու Ամիրային, աստուածային ողջոյն և օրհնութիւն ընծայեմ զգեղեցկաբան նամակ շնորհաւորութեան և բարեբաստութեան՝ վասն մեր պատրիարգական իշխանութեան ընկալայ անպատում շնորհակալութեամբ: Օրհնեցի և օրհնեմ զաստուածախնամ գերդաստան Ձեր, և աղօթեմ առ Աստուած պահել միշտ ընդ աւուրս երկնից՝ բազմահարուստ իշխանական ճոխութեամբ ականաւոր և երևելի: Արդ՝ թէ որպէս նախանձելի երևի մերս աստիճան բազմաց, և ոմանց ևս՝ հարուստ և բազմագանձ: Սակայն եթէ զիս հարցանես, և հաւատաս բանից իմաց, յօրէ յորմէ անուանեցայ Պատրիարգ, հատաւ քուն յաչացս, բարձաւ ուրախութիւն յերեսացս: Եւ կարծեցեալ Աթոռն բազմագանձ, տոկոսիւք պարտեօք յանձնեցաւ մեզ, և ոչ ոք ի մտերիմ բարեկամաց, կամ ի կարծեցեալ հարազատ եղբարց՝ գտաւ մեզ ձեռնտու օգնական,

վասն այնորիկ պարտաւորեցաք, զՍրբոյ Աթոռոյս հաւատարիմ միաբան զշնորհալի Իսահակ ծայրագոյն վարդապետն առաքելական պաշտօնիս նուիրակութեան՝ առաքել ի Հնդկաստան, գուցէ թէ գտանել այցելութիւն ինչ, զոր յանձն առնեմ և շնորհաց Զերոց: Ողջ լեր ի սէր և յուրախութիւն որդիս,

Սրբոյ Երուսաղէմի Պատրիարգ
Զաքարիա Արքեպիսկոպոս:

1842 մայիս 12
ի սուրբ Երուսաղէմ:

(Նոյն ձեռագրով և նոյն թանաքով ձախակողմյան լուսանցքում Զաքարիա Պատրիարք գրում է հետեվյալը.—)

Ազնուական մաեստեսի Ցակոբ խոհեմամիտ աղային, և ամենայն օրհնեալ քերց և ընտանեաց, ողջոյն և օրհնութիւն ընծայեմ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կոնդակի Ա երեսի վերևի կենտրոնական մասում կա պատրիարքի կարմիր կնիքը, 4 սմ. տրամագծով, որի մեջտեղում նկարված է հարություն առնող Քրիստոսը, ձախ ձեռքին ունենալով դրոշակ, իսկ գլխավերևում մի աղավնի: Կնիքի շուրջ բոլորը գրված է հետևյալը.—)

Յիսուսի Քրիստոսի ծառայ Զաքարիա պատրիարք սրբոյ Երուսաղէմի: ՌՄՂ (1841 թ.):

(Կոնդակի Ա երեսի վերևի ձախակողմյան անկյունում, կանաչ թանաքով, կնիքով տպված է հետևյալ երկու տողի վրա.—)

Հաւաքածոյ Արտաշէս Գարտաշեանի—Գահիրէ:

(Նոյն կնիքով երկու անգամ տպված է Ա էջի կոնակում):

№ 268

ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 2:—**Մեծությունը՝** 25.6×16.5 սմ.:—**Նյութը՝** դեղնած և տեղ-տեղ կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար, ներքևի աջակողմյան մասը կտրված է:—**Գրությունը՝** միապյուն:—**Դատարկ թղթերը՝** մեկ հատ (երկրորդ թերթը):—**Տողերը՝** 16:—**Գծումները՝** առանց ճնշումի:—**Գիրը՝** շեղագիր:—**Զարդագրություն՝** չունի:—Երկրորդ թերթում ամրացված է Խրիմյան Հայրիկի նստած լուսանկարը:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Մկրտիչ Խրիմյան կաթողիկոս Ամենայն Հայոց:—**Ժամանակը՝** 29 հոկտեմբերի 1898 թ.:—**Վայրը՝** ս. Էջմիածնի վանք:—**Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետի 1963 թ. նոյեմբեր ամսին Եգիպտոս կատարած հովվապետական այցելության առթիվ նվեր է ստացված կահիրեաբնակ պրն. Արտաշես Գարտաշյանի կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տպագիր—կարմիր թանաքով).

Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

(Ձեռագիր—սև թանաքով).

Բարեկրօն Կարապետ քահանայի Յովսէփեանց, պաշտօնէի ս. եկեղեցւոյն հայոց Գահ(ի)ռէի, Հայրապետական ողջոյն և օրհնութիւն:

Քաղցր է Մեզ լսել զարիաջան ծառայութիւնը պաշտօնէից Մերոց որք ջանան ըստ կոչման իւրեանց խղճի մտօք կատարել զպարտիս իւրեանց և գրաւել յինքեանս զհամակրանս ժողովրդականաց և զուշադրութիւն հոգևոր բարձր իշխանութեան: Տեսեալ ի քեզ զայդ ջանս արդիւնաւորս:

Մեք այսու Հայրապետական կոնդակաւ շնորհեմք քեզ իրաւունս կրել ի կուրծդ զարծաթեայ լանջախաչ ոսկեզօծ առանց ձուլեալ պատկերի Փրկչին: Յուսամք զի յետ այսու ևս առաւել արիասցես ի կոչմանդ և կայցես յայդ բարւոք ընթացդ ի փառս ս. եկեղեցւոյ և յօգուտ ժողովրդականացդ: Ողջ լեր Տերամբ:

Մ(կրտիչ) Կ(աթողիկոս) Ա(մենայն) Հայոց
Ի 29 հոկտեմբերի 1898 ամի
Եւ ըստ տումարիս ՌՅԽԸ
Եւ ի Հայրապետութեան Մերում Զ ամի
յԱրարատեան Մայր Աթոռն ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ:
թ. 1246.

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կոնդակի Ա երեսի վերևի կենտրոնական մասում կա Խրիմյան Հայրիկի քառակուսի կարմիր կնիքը, 2.9×2.7 սմ. չափերով, որի վերևում նկարված է մի գառնուկ, որ բռնած է մի դրոշակ, ինչպես նաև արեգակի ճառագայթները: Կնիքում գրված է հետևյալը).

Մկրտիչ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց: ՌՅԽԲ—1895:

(Կոնդակի Ա երեսի վերևի աջակողմյան անկյունում, կանաչ թանաքով, կնիքով տպված է հետևյալը երկու տողի վրա.—)

Հաւաքածոյ Արտաշէս Գարտաշեանի—Գահիրէ:

(Նոյն կնիքով երկու անգամ տպված է Ա թերթի կոնակում, երկու անգամ լուսանկարի կոնակում և մի անգամ էլ Բ թերթի կոնակում: Լուսանկարի կոնակում ձեռագիր գրված է հետևյալը.—):

Տ. Տ. Մկրտիչ կաթողիկոս Խրիմեան վանեցի:

(Շարունակելի)